

ԱՆԳԻՏԱԿԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐ

Գիտակցության կորուստը մարդու կյանքին սպառնացող վիճակ է, քանի որ շատ արագ կարող են խաթարվել նրա շնչուղիների անցանելիությունն ու դադարի շնչառությունը: Դրա պատճառ կարող են դառնալ բազմաթիվ վնասվածքներ և հիվանդություններ, ինչպիսիք են, օրինակ, սրտի աշխատանքի խանգարումները, գլխուղեղի վնասվածքները, հանկարծահաս հիվանդագին վիճակները, թունավորումները և այլն:

Բացի այն, որ անգիտակից տուժածի բոլոր մկանները թուլացած են, և մեջքի վրա պառկած դիրքում նրա լեզուն կարող է հետ գնալով փակել շնչուղիները, նրա մոտ բացակայում են նաև կլլման ու հազի ռեֆլեքսները: Դրա հետևանքով թուրքը, արյունը, փսխման զանգվածները կարող են լցվել շնչուղիներ և շնչառության դադարի պատճառ դառնալ:

Եթե տուժածն անգիտակից վիճակում է, բայց շնչում է, շնչուղիների անցանելիությունն ապահովելու համար նրան պետք է շրջել կողքի ապահովության դիրքի: Այս դիրքում նրա բերանի պարունակությունը արտահոսում է դուրս, իսկ լեզուն չի կարող հետ գնալ և փակել շնչուղիները:

ԿՈՂՔԻ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԻ ՇՐՋԵԼՈՒ ՔԱՅԼԵՐ

Ստուգեք տուժածի գիտակցությունը: Եթե տուժածը անգիտակից վիճակում է, բացեք շնչուղիները և ստուգեք շնչառությունը: Եթե տուժածը շնչում է, շրջեք նրան կողքի ապահովության դիրքի: Դրա համար.

- 1 Ծնկի իջեք տուժածի կողքին՝ մոտավորապես նրա մարմնի միջնամասում:
- 2 Տուժածի՝ ձեր կողմի ձեռքը տարածեք նրա մարմնի նկատմամբ մոտավորապես ուղիղ անկյան տակ և ծալեք արմունկը:
- 3 Մի ձեռքով բռնեք տուժածի ոտքը ծնկան հողի շրջանում, ծալեք այն և պահեք այդ դիրքում:
- 4 Ձեր մյուս ձեռքով տուժածի՝ ձեզանից հեռու գտնվող ձեռքի դաստակը առբերեք դեպի տուժածի այտը և դրանով պահեք նրա գլուխը:
- 5 Դանդաղ, համաչափ և զգուշորեն շրջեք տուժածին դեպի ձեզ՝ օգտագործելով ծունկը որպես լծակ: Այնուհետև տուժածի՝ վերևում հայտնված ձեռքի արմունկն ու ծունկը հենեք գետնին: Ոտնաթաթը իջեցրեք մյուս ոտքի վրայից և ոտքը ծալեք այնպես, որ ծնկան հողը լինի ուղիղ անկյան տակ:
- 6 Համոզվեք, որ տուժածի դիրքը կայուն է:
- 7 Այնուհետև կրկին բացեք տուժածի շնչուղիները: Բռնեք նրա ճակատից ու կզակից, գլուխը զգուշությամբ հետ տարեք՝ դեմքը մի փոքր շրջելով դեպի ներքև և բացելով բերանը:

Կողքի ապահովության դիրքի շրջելուց հետո տուժածին մենակ մի՛ թողեք: Ծածկեք նրան և մինչև շտապ օգնության գալը պարբերաբար վերահսկեք վիճակը, ստուգեք շնչառությունը՝ ձեռքը որովայնի վրա դնելով: Եթե շտապ օգնության ժամանելը ուշանում է, և տուժածը շատ երկար է մնում կողքի ապահովության դիրքում, 30 րոպե հետո շրջեք նրան մեջքի, ապա կողքի ապահովության դիրքի՝ հակառակ կողմի վրա: